

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՇԱՊԱՆԵԱՆԻ ԾՈՒԾԱՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Պ. ՇԱՊԱՆԵԱՆԻ
 նաև իր ծովանկարներէն յիշուեալ հատի չափ
 ցոյց գրաւ. Ապրիլ 20էն մայիս 17, Ռիւ Ռուս-
 յալ Մէլոն տեղ-գ. Արթիւրի սրահին մէջ ւ
 Գործերը զոր իր տես գրած է այս անգամ, ցոյց
 կուտան շատ մեծ յատկանշանքներն մը պ. Շա-
 պանեանի տաղանդին մէջ . իր առաջին արտա-
 դրութիւնները Այվազովսկիի ազդեցութեամբ
 ստորադրուած էին եւ զիտ զուրկ անձնական զը-
 բոյմէ . այսմեան ծովանկարներուն մէջ պ. Շա-
 պանեան կրեւան կը բերէ աւելի ազատ, աւե-
 լի ինքնատիւ կրեւան կը բերէ կնիք մը .
 իր այս նոր «Եղանակ»ին կարծմատ որման նպաս-
 տած ըլլալ կը թուին փրանսական «էմբրեսիո-
 նիսթ»ներու . — մասնաւոր Մոփփաշի . կի-
 ետմէնք եւ Սիւլի . — ներգործութիւնը, ցոյց
 այդ ներդրութիւնը ստրկական ցոյցման
 մը պէս չէ անգամ պ. Շապանեանի երանգապը-
 նակին մէջ, այլ ետեւ է անոր համար բեղմ-
 նաւոր դասը, կենսաբեր թելադրումը որ ան-
 հատակութիւնը կ'արթննէ եւ կը կազմա-
 կերպէ ։ Պ. Շապանեան կը նախապէր արտա-
 յայտել հանդարտ ծովուն հոգեբանութիւնը, իր
 անհուն տիրութիւններուն կամ իր թարմ
 ժպտութեանքները, իր մեծ երազանքին կամ իր
 կանացի պըրանքներուն մէջ . ու իր երանգա-
 պանակի արդէն ունի մասնաւոր բառի չնկերուն
 մէջ՝ այնքան այլապէս որքան կենսախառն
 զուեղութիւնն մը՝ թարգմանելու համար ծու-
 վին հոգեւոյն այդ մէկ քանի մասնաւոր վի-
 ճակներն ։ «Գիշեր» որ ողկանոսի վրայ ։
 «Բերիւնի» ծովախորշը, «Բերիւնի» ծովախորշին
 մէջ վերջին ճառագայթները ։ «Վերջալոյս» .
 «Զինորութեան նաւակներ» արեւու մուտ-
 քին ։ «Մերկային օրով» ։ «Բոնթ-Ալէ-
 նի» ծովախորշը, «Պիւ-Իլի» ծայրին եւ մերկոտ
 ծով ։ Արեւը վերջալոյսին, «Տոնանի նաւա-
 ինքնատիւ վերջալոյսին», «Վերջալոյս» . «Ալ-
 իբր» . «Վերջին ճառագայթները» . «Բեր» եւ
 խորակները . «Թիւրպի» . «Մոնթէլար» .
 «Մոնթէլար» ծովախորշին մէջ . զոտարբեր
 բանաստեղծութեան եւ ճշմարտութեան ։

«Եւ Նոր» ճերմուտը (30 ապրիլ) կը գրէ .
 «Պ. Շապանեանի ցոյց գրած է Մէլոն տեղ-գ.
 Արթիւրի մէջ յիշուեալ հատի չափ նկարներ եւ
 բառիներ որ կը ներկայացնեն Պրեմիանի
 քանդակներն ։ Պիւ-Իլի, Լըբրուասի եւ
 Ռոնիւրի չրկականքը, ինչպէս եւ Պուլոնի
 անատին եւ Սիւլիւրականի . Պ. Շապանեան
 լսածին նայելով Կովկասի մըն է, քայլ իր ու-
 ճը բոլորովին փրանսական է, իր այլախառն
 թիւնը դեռ շատ կարծի է եւ պէտք ունի ա-
 զատ ոճի մը ։ Իր յաջորդութեանը տարակոյս
 ունիմ, որովհետեւ իր բառիները ունին
 ճիշդ այն յատկութիւնները որոնք կը պակսեն
 իր իւզականիկ նկարներուն մէջ . Մասնաորա-
 պէս ուշադրութեւ պաշտեցին «Լա քոթ Սո-
 վաթ», «Լըբուլէն», «Պիւ-Իլ», «Կոնակը», «Ե-

րիկուն» եւ «Զմեռուան քնանկար», որոնք շատ
 հաճելի են եւ շատ անձնադրույմ իրենց շինուած-
 քի ձեւին մէջ ։»

«Մորենիկ բոսթը» (1 մայիս) կը գրէ . —
 «Պ. Շապանեան» ծովանկարէն, ցուցարած
 է այս փոխոյն շատ մը զարմանալի նկար-
 պատկերներ ողկանոսի նկարագրին . իր նը-
 կարներն եւ բառիներն ունեն կը ներ-
 կայացնեն արեւոտ հարաւիկն հուռեւ ժըպ-
 տուն ալիքները, այլ ցոյց կուտան անդուն-
 դին քաղաքակ մեղամարմնութիւնը, խիստ լը-
 ութիւնը, յորձանուտ խոտոտ անասմանու-
 թիւնը, եւ կամ ուրիշներ ալ որոնք կը ցու-
 ցեն զերազոյն խաղաղութիւնը յաւիտեա-
 կան կապոյտին իր բոլոր անվախճան խոր-
 հուրովը . պ. Շապանեան իր տարբեր մէջ կը
 ցուցնէ մարդկային հոգին՝ շատ մը շահեկան
 «արդիւնքներ» յառաջ բերելով ։

ՀԱՅ ԱՐՈՒԵՍԱԳԵՏՆԵՐԸ ՍԱՆՈՒՆ ՄԷՋ .
 Այս տարուան երկու Ապրիլներուն մասնա-
 ցած են, նայ արուեստագէտներէն . ի պ. Շա-
 փիւրճեան, Ս. Բեկեան եւ օր . Պապանեան ու
 որնք առաջին անգամ ըլլալով կը ցուցարկեն
 Սալոնին մէջ ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆԻՆԵՐ . — Պ. պ. Բ. Բե-
 մանեան եւ Յ. ար Բեմանեան ընտրուեցան, ինչ-
 պէս կը յուսայինք, եւ շատ փառչուն յայտու-
 թեամբ ։ Հայկական դասը երկու նոր պատ-
 պան պիտի ունենայ ուրեմն ֆրանսական խոր-
 հորդարանին մէջ, երկու հոգի, անկեղծ ու դի-
 տակից պաշտպաններ ։ Պ. պ. Տրնի Բոնէն, Ռու-
 անէ, Մարտի Սանայա, Տ'Եսթուրնէլ տը Բոն-
 թան, ինչպէս եւ ուրիշ հայասէր երեսփոխան-
 ներ, վերաբերուած են Թորէս, որ Տրէֆիւսի
 խնդրոյն հետեւեանքով զրկուած էր իր աթոռէն,
 վերադառնալով իր մտնէ խորհրդարանը ։

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՐԵՎԱՆԻՆԵՐ

«Հայ արուեստի երեկոյց»ը, զոր կազմա-
 կերպած էր Անահիտի անօրէնքը՝ աջակցու-
 թեամբ պ Էտիպար Շահինի, տեղի ունեցաւ
 մայիս 29ի իրիկունը, «Սալ տեղ-Արթիւր»-
 թէպ որ ծրարներն մէջ ։ «Անահիտ» Մայիսի
 թիւը տարազովութեամբ չարուած ըլլալով, քա-
 նի մը տող միայն կրեալքը նուիրել այս ան-
 ցած . երեկոյցին նկարագրութիւնը, մասնա-
 մասնութիւնները թողով Յունիսի թիւին որ
 քիչ օրէն կ'երեւայ, Հակապաշտ արտակարգ-
 րէն այլանշակ օրը եր . — մորիկ, տեղադա-
 րափ անձրեւ, կայծակ, փայլակ, եւն . — հինգ
 հարիւր հոգիի չափ բազմութիւն մը եկած էր
 երեկոյցին հայ եւ օտարազգի . Պ. Տրնի Բո-
 չէն, որ անձնական կարեւոր դործի մը համար
 ստիպուած էր ուրիշ տեղ մը գտնուել աջ ի-
 րիկունը, երեկոյցին սկիզբը եկաւ ու քանի մը
 վայրկեան մնաց երեկոյցին ներկայ զոտնու-
 չկարեւորաւ համար իր ցաւ յայտնու . Պ.
 Էրնէսթ Լավիւս, անհանդիստ, չէր կըցած քա-
 ղայց զրկած էր տիկին Էրնէսթ Լավիսը

Պպ Մուսնէ-Միւլլի եւ Բոլ Մուսնէ որ խոստաւ
ցած էին մասնակցել երկկողմին, չկրցան գալ,
որովհետեւ այդ իրիկունը «Օթիլլի» թաղապալու
ստիպուած էին Տիկին Գորաւ-Լաբարսըրի-Բիշ-
րէն նմանապէս չկրցաւ գալ՝ որովհետեւ
Վտովիկ մէջ ներկայացման մը զլիստոր գերբ
կը կտատրէր։ Տիկին Սըզոն-Վէպէր հինգշաբթի
ցերեկը Գոմէտի ձորանակէի մէջ ձէլ Պիւրկըրալ
խաղաղած, յոյնած եւ արդէն առողջութիւնը
խանգարուած, չէր կրցած գալ եւ հետեւեալ
նամակը գրկած էր պ. Զօպանեանին։

Սիւրելի բարեկամ,

Կ'տպահովեմ ձեզ որ շատ կը ցաւիմ, բայց ինչի
համար անկարելի է գալ այս իրիկուն։ շատ անհանգիստ
եմ եւ շատ յոյնած։ Մի՛ վշտանա՛ք ինչի զէմ։ Երբիշ
նշագած դիւ կ'ունենա՛ք ընդունե՛ք իմ այս շատ հա-
մեստ լուսման եւ քիչ մը ցտեղեք չգալուն։ Սրտոնց ձեզ
ամենաւ։ Հետ եմ է ձեռքերսիդ զը սեղմեմ։

Տիկին Սըզոն Վէպէր

Տիկին Սըզոն-Վէպէրի «լուսման» յիտուն ֆը-
րանքի դուստր մըն էր։ Եւ այդ նիւթական
զոնգով թիւնը, զոր այդ սքանչելի կիները (որ հա-
րուած չէ) յանձն կ'անէր իր խոստացած բա-
ւառական աջակցութիւնը կատարել չկարենա-
լուն զգացած ցաւը յայտնելու համար, պիտի
բազումապատէէ անշուշտ խորին սքանչացումը
զոր Հայկեր կը գրեկնայ այդ մեծ արուեստագէ-
տին եւ մեծասիրտ ծրարաւուհւոյն նկատմամբ
որ ամէն առթիւ մէջ իր տաղանդը որ սպաս
դրած է մեր գաղտին, Կը յուսանք որ Բարիկի
Հայուհիները պիտի գիտնան ո եւ է վայելուչ
ձեռով իրենց երաժարագիտութիւնը յայտնել
այդ տաղանդով ինչպէս հազարով մեծ կնոջը։

Տիկ. Սիւզան Տէրբէ, հիւանդ նմանապէս,
ապշուր թիւնը ունեցած էր Գոմէտի ձորան-
ակէի ամենին փայլուն «ժէմ-բըրդիէն»։ Պ. Տե-
ստիւր զրկելու որպէսզի իր կտորն արտասանէր։
Պ. Կապրիէլ Մուրէ կարգից հետալից
բանախօսութիւն մը Հայոց պատմութիւնն,
գրականութեան եւ արուեստին վրայ։ Օր-
Տեիլէր պ Տեստի՝ Գոմէտի Ծրանակէն, պ Բա-
մ՝ Ստեփան, պ Ֆիլիք Կարիթի, Օր, Թոմաս,
պ. Կիւլպէնի արտասանեցին հայկական հին ու
նոր բանաստեղծութեանց ֆրանսիերէն թարգ-
մանութիւններ։ Պ. Ամիրեան եւ օր. Բալ-
ասարա երգեցին հայկական ժողովրդական երգեր։
Երեկոյթը անցաւ ամենամեծ ոգեւորու-
թեամբ։ Օտարազգիները շատ զոն անցին հայ-
կական արուեստի նմոշներէն։

Երեկոյթին հասոյթը պիտի յատկացուի ինչ-
պէս որոշուած էր առաջուց, Կիպրոսի հայ-
կական որբանոցին։ Տոմասի ընդունողներէն
մէկը մտաւ դեռ չէ վճարած։ այդ պատճառով
զուտ հասոյթին որոշ գումարը յաջորդ թիւով
միայն պիտի կարենանք հրատարակել։ Կը
խնդրենք որ դեռ չվճարողները հաճին իրենց
տոմսակին գինը զրկել Կիպրոսի որբանոցի
Բարիկի խնամակալ մասնախումբին նախագահ
պ. Փէշիւպեանին, 39bis, rue Châteaudun,
Paris։ Երկկողմին նիւթական աջողութեան

համար իրենց աջակցութիւնը նու իրենցին տիկին
կրուսկալտ (Յնեալ Մէլիքեան) եւ պ. Կրուս-
կալտ, պ պ. Տիւրքան խան Բէլլէկեան, Մ. Յ.,
Ս. Ա. Նեհան, Ա. Կէվէկեան, Ա. Նարմանեան,
Յ. Գարբալեան, Ա. Պարսամեան, որոնց այս-
տեղ կը յայտնենք մեր խորհին շնորհակա-
լութիւնը։

ԳՐԲԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

Պ. ՉԵՐԱՋ ԵՒ ԲԱՐԻԶԻ ՄԷՋ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱ-
ՆԻ ՄԸՓԱՂԱՔԱՐԸ. — Բարիկի Հայոց Բարեգոր-
ծական ընկերութեան վերջին երկկողմին առ-
թիւ ձ. Մամէնի յոշուածին հետեւեալ տո-
ղորբ մասնաւորապէս աշագործ եւ։

«Եթէ դիւստը Տայ գաղթականութեան բարոյական ու
նիւթական աջակցութիւնը վաղէկ, մտայիք է հիմնել,
ի ՊԵՏՐՈՒՄԻՆԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԻ ՀԱՅՈՒՆ, Երեկոցապահ մը,
Լուսման, ԱՅՐԱՅԻՆ ԳՐԱՐԱՅ ՄԸ, արհեստագործական
Գրքոց մը։

Ողորմած հոգի Հայկական Միութիւնը, զոր
կործանելու «ազգասիրական» ջանքերուն տնի-
քան զերմեռանդորէն աջակցեցաւ Պ. Չերազ
ի, իրեն զլիստոր նպատակներէն մէկն ընտրած
էր ախտախի եւրոպական համալսարանական
քաղաքի մը մէջ հայկական դպրոց մը հիմնե-
լու։ այն նիւտին ուր կանոնադրութիւնը վէ-
ճի զարեւոյս, պ. Չերազ, պ պ. Կալանեան եւ
Բասմալեանին հետ, մօլեգին հակառակորդ մը
երեւցաւ եւրոպային մէջ, եւ մանաւանդ Բարիկի
մէջ, հայկական քոյէժէ մը հիմնելու գաղափա-
րին, յայտարարելով թէ լաւագոյն էր այդպիսի
դպրոց մը հիմնել Կիպրոս, Նեքապոս, Պուսկարիս,
Վան թայց ոչ Բարիք։ Ուստի եւս տեսնելով որ
պ. Չերազ հիմա համոզուել է ճշգրտութեան այն
գաղափարին զոր բոլոր ուժովս պաշտպանեցի
անցեալ տարին։ Եթէ պ. Չերազ եւ իր ընկեր-
ներուն ջանքովն է որ այդ գաղափարը պիտի
կրնայ իրականանալ, եւ այժմէն կը շնորհաւոր-
ւիմ զինքն ալ, իրենցիկներն ալ՝ ո՛ր ալ ըրաւն
ի՛նչ աւելի սիրուն բան քան տեսնել հակա-
ռակորդներ որ սիրած մէկ գաղափարը հար-
ուածե՛ք յետոյ, անոր յուրից կը բոլորին եւ
անոր համար կ'աշխատին։ Բայց իրողութիւնն
այն է որ՝ պ. Չերազ հակառակի կամ աջա-
ցի, «այդ գաղափարը, ինչպէս կը գրէ անցեալ
տարի «Անանիստ»ին մէջ, անհամաձայն է իրա-
դրածելու եւ պիտի իրազդոծուի. — որովհետեւ
Բարիկի Հայութեան մատուռ մը նշուողը ան-
նոր քով դպրոց մըն ալ կանդնելու անհրա-
ժեւտութիւնն բմբնէրուն. չափ ողջամտութիւն
ունեցող անձ մըն է։

Ա. Չ.

ԲԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ ՄԸ

«Անահիտ»-ի տնօրէն հրուիրուած է բանա-
խօսութիւն մը արտասանել՝ յունիս 11 ի
րիկունը՝ Բարիկի 10րդ քաղաքաբանին «Ժո-
ղովրդական Համալսարան»ին մէջ։ Ընտրուած
նիւթն է՝ «Հայերը, իրենց պատմութիւնը, ի-
րենց բանաստեղծութիւնը, իրենց յարաբերու-
թիւնները ծրարասյի հետ»։